

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆՑ.ԴՄ.ՏՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ

Լեզվի ինստիտուտի նախաձեռնությամբ կազմել ուսերենին առնչված երկլեզվյան բառահատոր բառարան, որը ունենի և շնորհակալության արժանի աշխատանք է: Բառահատոր այս նոր բառարանը, որի առաջին և երկրորդ հատորները հրապարակի վրա են, զբաղեցնում են А—О տառերով սկսվող զլխարառերը: Այս նոր բառարանը աչքի է ընկնում թե՛ իր ծավալով և թե՛ ընդգրկած հարուստ նյութով: Ռուս-հայերեն բառարանի երկրորդ հատորն ընդգրկում է К—О տառերով սկսվող բառերը և պարունակում է շուրջ 23 հազար բառհոգված¹:

Որո՞նք են այս նոր բառարանի նորույթներն ու առավելությունները:

Ռուս-հայերեն ընդարձակ բառարանը ձեռնարկելիս կազմողները ուսական բաժնի համար հիմք ընդունելով Ուշակովի ընդհանուր խմբագրության կազմված „Толковый словарь русского языка“ բառահատոր աշխատությունը, միաժամանակ, իրավացի կերպով, չեն սահմանափակվել այդ շրջանակներում, զգացել են, որ այդ, 30-ական թվականների համար շատ արժեքավոր բառարանը 20 տարի հետո ընկած ժամանակաշրջանի համար ինքնըստինքյան հնացած կլիներ և չէր կարող պարունակել մեր օրերի նորույթը:

Վերջին 25-ամյակում զարգացել է արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, տեխնիկան, գիտությունը և այդ կապակցությամբ կազմվել են բազմաթիվ նոր բառեր ու բառաոճեր, որոնք չէին կարող լինել Ուշակովի բառարանում:

Կազմողները այդ բացը, ըստ հնարավորին, լրացրել են հետազոտության շրջանի աղբյուրներից, օգտագործելով Օժեգովի մեկհատորյակը, ինչպես նաև ուս-դերմաներեն, ուս-ուկրաիներեն և այլ բառարանային աշխատություններ: Այսպես օրինակ, ավելացված են՝ лабильный, лагерник, магнитограф, магнитофон, магнитометр, обварной, обведший և այլն: Նման հավելումների թիվը հասնում է մի քանի հազարի և կազմում բառարանի շուրջ 10 0/0-ը: Այս աշխատանքը կատարելով հանդերձ, այնուամենայնիվ բառարանից պակասում են այժմեական շատ ակտիվ բառեր՝ магнитооптика, магнитофонный, лавировщик, комбайнирование, комбайностроитель, комбикорм, комбикормовый, лавровенчанный և այլն: Գիտակցում ենք, որ հնարավոր չէ կենդանի լեզվի համար կազմել լիակատար բառարան, հետևապես մենք բնություն առնենք եղածը, փաստականը:

Եւեղինք, որ նոր բառարանի համար հիմնադրուր ընդունված է Ուշակովի բառարանը՝ Այս մոտեցման մեջ որքան իրավացիություն ու ճշտություն, նույնքան և, կասեինք ավելի քան, սխալ կա: Ուշակովյան բառարանը մեկլեզվյան բացատրական բառարան է, որի կազմողները ղեկավարվել են Լենինի ցուցմունքներով՝ կազմել ուսաց լեզվի բացատրական բառարան, որն ընդգրկի Պուշկինից մինչև Գորկին ընկած ժամանակաշրջանը:

Վերջին 25-ամյակում կազմվել են ուսերենից այլ լեզուների առնչված մի քանի տասնյակ բառարաններ, որոնց հեղինակները իրենց աշխատությունների համար որպես հիմք ընդունել են դարձյալ ուշակովյան հայտնի բառարանը, սակայն այդ բառարանագիրները օգտագործել են տվյալ բառարանի զլխարառերը և նրանց առումները և ո՛չ բացատրական ընդարձակ մատերիալը և, երկլեզվյան բառարանի համար ոչինչ չավելացնող, երկարաշունչ մեջբերումներով երկլեզվյան բառարանը պետք է լինի իրոք երկլեզվյան թարգմանական բառարան և ոչ զեղարվեստական ասույթների ժողովածու կամ քաղաքական հանրագիտարան: Արդարությունը պահանջում է ասել, որ երկրորդ հատորը, համեմատած առաջին հատորի հետ, շատ ավելի զերծ է նշած թերությունից: Բերենք մի երկու օրի-

¹ Կազմողներ՝ Մ. Ա. Գևորգյան, Հ. Կ. Կուսիկյան, Հ. Ա. Համբարձումյան, Ն. Գ. Ցեր-Մինասյան, Վ. Ա. Փոթեյան:

նաև՝ **коммунизм** — կոմունիզմ և ապա՝ переход от капитализма к коммунизму возможен только через пролетарскую революцию и длительную эпоху диктатуры пролетариата — անցումը կապիտալիզմից դեպի կոմունիզմ հնարավոր է միայն պրոլետարական ռևոլյուցիայի և պրոլետարիատի դիկտատուրայի երկարատև դարաշրջանի միջոցով: Социализм — первая фаза коммунизма — սոցիալիզմը կոմունիզմի առաջին փուլն է: Принцип коммунизма: от каждого — по его способности, каждому — по его потребностям — կոմունիզմի սկզբունքն է. յուրաքանչյուրից՝ ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ իր պահանջմունքների: Կոմունիզմ բառնողովածի մեջ բերված այս օրինակները չափազանց արժեքավոր և մարքսիստական իմաստալի մտքեր են, բայց խոստովանենք, ոչ մի կերպ չեն կապվում երկկենդյան թարգմանական բառարանի հետ: Այդ հաջող մտքերը ամենայն խնամքով պետք է տեղ դրավեն քաղաքական դրադիստություն սովորեցնող դասադրքերում, բացատրական և հանրագիտական բառարաններում: Տվյալ բառարանի նպատակն է ցույց տալ թե ուսերենում գործածվող **КОММУНИЗМ** բառը ինչպես պետք է թարգմանել հայերեն: Բերված օրինակներից ոչ մեկը ոչինչ չի ավելացնում **КОММУНИЗМ** — կոմունիզմ թարգմանության վրա: Հայտնենք, որ մեր այս դիստոլությունը վերաբերում է օրինակներին և ոչ կայուն դարձվածքներին, որոնք նման բառարանի համար չափազանց անհրաժեշտ են, ինչպես՝ первобытный коммунизм, военный коммунизм, утопический коммунизм, научный коммунизм. Կրկնում ենք այս վերջինը կարևոր է և շատ կարևոր:

Երկարաշունչ մեջբերումներ կատարելու մեթոդին չեն հետևել ուս-ֆրանսերեն, ուս-անգլերեն, ուս-ուկրաիներեն և երկկենդյան այլ բառարանների հեղինակները: Այս ասելով, միաժամանակ ընդունում ենք, որ ասենք թե ուս-ֆրանսերեն, ուս-անգլերեն, ուս-ուկրաիներեն բառարան կադմելու սկզբունքները չի կարելի մեխանիկորեն տարածել ուս-հայերեն բառարանի վրա: Ֆրանսերենը, անգլերենը, ուկրաիներենը և մի շարք այլ լեզուներ հիմնականում գործ են ածում ուսերենում գործածվող բառերից շատերը, հետևապես և նրանց լեզվի համար միանգամայն պարզ են դառնում այդ թարգմանությունները և պահանջ չի դրացվում օժանդակ բացատրական հավելվածների, ինչպես՝ конвейер, материя և այլն. հայերենը այն լեզուների շարքին է պատկանում, որ ավելի լայն հնարավորություններ ունի թարգմանելու այս կամ այն բառը:

Հարյուր հազար բառ պարունակող բառարանում իհարկե կլինեն հարյուրների հասնող բառեր, որոնք նույնքան անհասկանալի կարող են լինել, որքան անհասկանալի է ուսերեն զրվածը, ինչպես՝ мутант — մուտանտ, мутатор — մուտատոր (դործիք), мутация — մուտացիա, ոչինչ չէր հասկացվի եթե փակադժված չբացատրվեր, բայց հենց այսօրինակ բառերի համար բացակայում են նրանց օգտագործման բնագավառը ցույց տվող օրինակները: Лазарет — լազարեթ, հիվանդանոց. ուրիշ ոչինչ, հենց այստեղ է, որ պետք է մի օրինակով ցույց տրվեր թե ինչ դեպքերում ենք գործածում լազարեթ և ինչ՝ больница, госпиталь և կամ лечебница, քանի որ այդ չորս բառերի դիմաց էլ բառարանում հանդիպում ենք հայերեն հիվանդանոց բառին: Օրինակները մեծ մասամբ բերված են պարզ ու հասկանալի բառերի համար:

Բառարանի թարգմանական բաժնում չի պահպանված միօրինակություն. երբեմն, միանգամայն անտեղի, շեղվել են Ուշակովյան ուղուց, այսպես, օրինակ, միշտ չէ որ նշել են բառի օգտագործման պատմականությունը կամ բնագավառը: Линотип, линотипист, линотипные բառերի համար բացատրությունից առաջ փակադժված գրված է տպգր. կամ магнетизация, магнетизерский, магнетизерство, магнетизировать բառերի դիմաց հնց. նշումները, մինչդեռ линотипист, магнетизер, магнетизирование բառնողովածների դիմաց ոչինչ չի գրված: Ուշակովը հետևողական կերպով բոլորի դիմաց էլ տվել է համապատասխան նշումը:

Ռուս-հայերեն բառարանի կազմողները հետևելով Ուշակովին, մի բառարմատ են համարել միանգամայն տարբեր բառեր, այսպես միացած է ЛОТ — խորաչափ և ուսական կշռաչափ, մինչդեռ դրանք տարբեր բառարմատներ են, առաջինը ծագում է հունարեն Լood բառից, երկրորդը՝ գերմաներեն Lot-ից:

Եթե լուտ-ի նման սխալներ մեխանիկորեն անցել են Ուշակովի բառարանից, ապա կան նույնարևույթ սխալներ, որոնց հետ Ուշակովը կապ չունի, այսպես ЛУЩИТЬ բայի դիմաց տրված են նրա չորս նշանակությունները առանձին-առանձին, բայց նույն բառ-

արմատի զոյական և ածական ձևերը համարվել են ոչ որպես առանձին նշանակություններ, այլ թույլ երանգներ, իսկ ինչպես հայտնի է հոգի փխրունացնելը կամ տախտակ քաշելը բոլորովին տարրեր են չոթում, կեղևում, կճյում բառերից:

Ուշակովը մի առավելություն ունի, այն է, որ գրում է.—*лучение—действие по глаг. лучить, կամ лученный—прич. страд. прош. вр. от лучить*, իսկ այդ բոլորովին չի նշանակում տարբեր բառաոճմաները միացնել և դարձնել իմաստային թույլ երանգներ:

Карьерный 1. Քառատրոփ, Կ. ձլլյոր— քառատրոփ արշավ, քառատրոփ քելք: 2. Հանքային, քարհանքային, քարհանքի: Ավազահանքային, ավազահանքի:

Այս երկու տարբեր ածական անունները դարմանում ենք, որ միացրել են մի արմատի տակ, ուսական բառարանագիրները չեն համարձակվել նման բանի — (Ушаков, Ожегов), հենց նույն հեղինակները այդ բառերի զոյականները տվել են որպես առանձին բառհոգվածներ:

Карьер¹ — Դառատրոփ արշավ:

Карьер² — Բաց հանք, քարհանք: Քարահանք: Ավազահանք:

Ֆրանսերենից ուսներենին անցած այդ գույգ *carriere* բառերից առաջինը փոխ է առնված իտ. *carriera*— որ նշանակում է վազք, իսկ երկրորդը՝ լատ. *quadrare* բառից, որը նշանակում է քառակուսի ձև տալ: Բառարան կազմողները որոշ ղեկաբերում շտկել են ուշակովյան բառարանի սխալները, այսպես՝ *маковка* բառի առումները առանձնացրել են և ընդունել որպես երկու տարբեր բառհոգվածներ, Օժեգովը նույնիսկ երեք մասի է բաժանել:

Բառարանում մեծ թիվ կաղմող հաջողված թարգմանությունների ու բացատրությունների կողքին, ինչպես՝ *лупа, ломбард, лазанье, лютый, общечеловеческий* և այլն, տեղ են գտել նաև մի շարք ոչ ճիշտ թարգմանություններ:

Пошаденка բառի դիմաց ձիուկ, բոսոտ ձի, վատ ձի գրելուց հետո ավելացրել են *явнот*, որը սխալ է, նախ *явнот*—ն հայերեն բառ չէ և երկրորդ *явнот*—ն համապատասխանում է ուսներեն *кляча* բառին:

Массивность բառի համար տրված հոծություն, մասսիվություն բացատրությունները լրիվ բավարար են, իսկ վիթխարիությունը սխալ է, այդ *колоссальный* բառն է: Հոծությունը և վիթխարիությունը միանգամայն տարբեր բառեր ու հասկացողություններ են: Հոծությունը — խտություն, կուռ լինելը, թանձրություն ցույց տվող զաղափար է, մինչդեռ վիթխարիությունը՝ մեծություն, ծավալ է ցույց տալիս:

Квагга— Կվագա (աֆրիկյան վայրենի ձի): Կենդանու մասին վայրենի չեն ասել, այլ վայրի: Մեր ասածը հաստատելու համար թերթենք նույն բառարանի առաջին հատորը, որտեղ *дикий* բառի դիմաց գրված է վայրենի, անկուլտուրական...:

Крах— բառի օրինակի մեջ *крах капитализма* неизбежен պետք է թարգմանել կապիտալիզմի կործանումն անխուսափելի է և ոչ կրախը:

Лидер 1. (բղբ.) Լիդեր, առաջնորդ (քաղաքական պարտիայի, հասարակական-պրոֆեսիոնալ կազմակերպության առաջնորդ, պարագլուխ): Քաղաքական իմաստով լիդեր նշանակում է պարագլուխ: Առաջնորդը *вождь*—ն է: Մեզ ծանոթ է լիդեր բառի սկզբնական նշանակությունը, բայց մեր օրերում իմաստավորվել է և կոնկրետացել:

Եթե ամեն մի առաջնորդ լիդեր է, ապա ամեն մի լիդեր առաջնորդ չէ: Լիդերը — որևէ քաղաքական պարտիայի, կազմակերպության աչքի ընկնող անդամն է, իսկ առաջնորդը՝ ընդհանուրի կողմից ընդունված զաղափարական և քաղաքական ղեկավարն է: Մի շարք ղեկաբերում փակազծված բացատրել են թարգմանվող բառը, այդ լավ է, բայց որոշ ղեկաբերում էլ փակազծված մասը փչացրել է ամբողջ գործը, այսպես *ливнер* լյարդութոք (մորթած անասունի ուտելի փորոտիքը՝ թոքը, սիրտը և փայծաղը): Փակազծված մասի փորոտիք բառը ամեն ինչ փչացրել է — փորոտիքը աղիքներն ու ընդերքն է (*ребуха*): *Мелкий*—մանր, փոքր — բերված է չորս օրինակ *м. скот, мелкая рыба, мелкая монета, мелкие расходы*: բոլոր ղեկաբերում էլ՝ իրավացի կերպով օգտագործված է մասը ածականը, իսկ որտեղ մնաց փոքրը, մեզ հետաքրքրում է թե արդյոք որևէ տեղ ուսներեն *мелкий* բառին համազոր կարող է օգտագործվել հայերեն փոքր բառը, կարծում ենք՝ ոչ: Մանրը արժեքային և ավելի որակային հասկացողություն է, իսկ փոքրը ծավալային: Ոսկյա տասը ուլբիանոցը ծավալով ավելի փոքր է քան պղնձյա հինգ կոսյեկանոցը, բայց վերջինը կոչվում է մանր դրամ, իսկ առաջինը փոքր դրամ: Ուշակովի, ինչպես և ուսական որևէ բառարանում *мелкий* և *маленький* բառերը, ավելի ղեկաբերում, չեն

շփոթված իրար հետ: Այդ սխալից էլ առաջացել է мелкость, мелкота բառերին չհամապատասխանող՝ փոքրություն բառը:

Общий բառի զիմաց կարդում ենք ընդհանուր, հանուր թարգմանությունները և սույա տասներեք տող զրադեցնող ութ օրինակ, և տասնմեկ տող զրադեցնող դարձվածքներ, ուր ամենուրեք общий բառը թարգմանված է հայերեն ընդհանուր բառով, հարց է առաջանում, իսկ որտեղ մնաց այդ համուրը, քսանչորս տող զրադեցնող օրինակների մեջ հնարավոր չէ՞ր արդյոք մի օրինակ վերցնել համուր թարգմանությամբ, իսկ եթե ոչ, կնշանակի թարգմանական բաժնում ավելորդ էր և հանուրը:

Капитан-лейтенант բառը Սևակովի բառարանից առանձնացրել և կապել են առանձին բառհոգված, բայց չի նշված հնց. կամ նիւ. և այլն, այլապես կհասկացվի, որ մեր այսօրվա բանակն էլ օգտագործում է գինվորական այդ աստիճանը: Այսպես նաև легкая кавалерия և այլն: Թարգմանությունների ժամանակ այժմեականությունը որոշ դեպքերում բացակայում է, այսպես՝ хор բառի համար այսօր գործածական է երգչախումբ բառը, բառարանում՝ малочисленный хор — սակավաթիվ երգեցիկ խումբ:

Մեր կատարած դիտողությունները բառարանագրական կարևոր և էական խնդիրներ են, որոնք պետք է մտահոգեին բառարան կազմողներին, և երկլեզվյան թարգմանական բառարանի սկզբունքները չխառնեին մեկլեզվյան բացատրական բառարանի հետ, միաժամանակ հայտնում ենք, որ մեր նպատակը չէ իջեցնել ուսու-հայերեն այս ընդարձակ բառարանի արժեքը, այլ ցանկություն է երրորդ և չորրորդ հատորները, ըստ հնարավորին, գերծ պահելու այդ կարգի թերություններից:

Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

